Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Իրանի հայկական գաղութում աշխարհիկ հանրակրթական դպրոցների ծագումը տեղի է ունեցել XIX դարի առաջին կեսում։ Առաջին անգամ նրանք ստեղծվեցին գաղութի այն ժամանակվա կենտրոններում՝ Թավրիզում և Նոր Ջուղայում, Կովկասի, Ռուսաստանի, Հնդկաստանի և այլ երկրների հայկական մշակույթի օջախների բարենպաստ ազդեցության ներքո։

Այն ժամանակվա առաջադեմ դպրոցի հիմնադրման առաջին փորձը ձեռնարկվեց 1833 թ. Նոր Ջուղայում։ Դպրոցը ստեղծվեց մադրասցի բարեգործ Գրիգոր Սամյանի միջոցներով, սուրբ Ստեփանոս եկեղեցու բակում։ Սակայն միջոցների սղության պատճառով դպրոցը գոյություն ունեցավ ընդամենը 3—4 տարի։ Այն նորից բացվեց 1840 թ.[1]։ 1843 թ. սուրբ Աստվածածին եկեղեցու բակում ստեղծվեց Հայկյան հայրենասիրական դպրոցը, որի կառուցման միջոցները տրամադրել էր կալկաթաբնակ Հարություն Աբգարյանը։ 1853 թ. սուրբ Մինաս և սուրբ Ստեփանոս եկեղեցիներին կից[2] նմանօրինակ դպրոցներ ստեղծվեցին։

1854 թ. Նոր Ջուղայում բացվեց գաղութի առաջին օրիորդաց դպրոցը, որն ի դեպ հանդիսանում է նաև առաջին օրիորդաց դպրոցը ամբողջ Իրանում։ Սա կառուցվեց Կատարինյան օրիորդաց կուսանոցին կից ճավայաբնակ Մանուկ Հորդանանյանի[3] միջոցներով։

Տնտեսական դժվարին պայմանների, ինչպես նաև ուսուցիչների պակասության պատճառով, այս բոլոր դպրոցները 1880 թ. միացան՝ ստեղծելով «Ազգային Կենտրոնական դպրոց»։ Դպրոցի շենքը կառուցվեց Ճավայում, Բիրմայում և Հնդկաստանում բնակվող հայերի մեջ անցկացված հանգանակությամբ հավաքված գումարներով[4]։

XX դարի սկզբներին, 1901—1905 թթ. Նոր Ջուղայում հիմնադրվեցին «Գևորգ Քանանյան» անունով օրիորդաց դպրոցը և մանկապարտեզը, ի հիշատակ մոսկվացի Գևորգ Քանանյանի՝ Ռափայել Պատկանյանի ընկերոջ։ Դպրոցը, որն ստեղծվեց Գևորգ Քանանյանի կտակած միջոցներով, տեղավորվեց այն ժամանակի համար հազվադեպ երկհարկանի հարմարավետ շենքում[5]։

---

1 Հարություն Տեր-Հովհաննյանց, Պատմություն Նոր-Ջուղայի, հ. 2-րդ, էջ 255—258։

2 «Պարսկահայ տարեցույց», Թեհրան, 1929, էջ 31—32։

3 ՀԿՊՊ արխիվ (Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ), ֆ. 56, ց. 3, գ. 417, թ. 150։ Ե. Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 110։ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 32։

4 ՀԿՊՊ արխիվ, ֆ. 56, ց. 3, գ. 417, թ. 150։ «Ատրպատական», էջ 110, «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 32։

5 «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 33։

Չնայած, որ նոր տիպի դպրոցի ստեղծման առաջին փորձը կատարվեց Նոր Ջուղայում, իրանահայերը ժամանակակից դպրոցական կրթության պատմական սկիզբը գաղութում համարում են 1835 թ.՝ Թավրիզի «Արամյան» դպրոցի հիմնադրման տարեթիվը։ Դպրոցի գոյության հարյուրամյակը գաղութում հանդիսավոր կերպով նշվեց 1936 թ.[6]։ Սկզբում նա տեղավորվում էր Թավրիզ։ Ղալա թաղում գտնվող առաջնորդարանի հին շենքի մի քանի սենյակներում։ Դպրոցի առանձին շենքը կառուցվեց թեմի առաջնորդ Սահակ Սաթունյանի օրոք (առաջնորդել է 1851—1857 թթ.—Հ. Մ.)։ «Արամյան» դպրոցի առաջին ուսուցիչներից մեկն էր Մեսրոբ Թաղիադյանը[7]։

Ինչպես հայտնի է, 1875—1877 թթ. «Արամյան» դպրոցում դասավանդել է Բաֆֆին, որը եկել էր Թիֆլիսից։ Բաֆֆին մտադիր էր Թավրիզում բանալ օրիորդաց դպրոց, ինչպես նաև տպարան։ Սակայն հարկադիր մեկնումը Թավրիզից ձախողեց այս նպատակների իրագործումը։

Թավրիզում օրիորդաց դպրոցի ստեղծման միտքը հաջողվում է իրագործել «Ավարայրյան» միության անդամներին 1879 թ.[8]։ 1883 թ. Թումանյան եղբայրներից մեկը (Թումանյան առևտրական տան անդամներ—Հ. Մ.) այս դպրոցի համար, որը մինչ այդ տեղավորված էր մասնավոր անում, գնեց առանձին շենք։ Բայց քանի որ շենքը հարմար չէր դպրոցի համար, այն շուտով քանդվեց և նրա տեղում կառուցվեց դպրոցի նոր շենք (1887 թ.)։ Դպրոցը, որն ստացավ «Աննայան» անունը, ականատեսների վկայությամբ, կանգնած է այն տան տեղում, որտեղ ապրել է Բաֆֆին։ 1905 թ. այս դպրոցը միացավ «Արամյան» դպրոցին[9]։

1882 թ. Թավրիզի Լիլավա կոչվող թաղում բացվեց «Հայկազյան» դպրոցը, իսկ 1895 թ.՝ «Թամարյան» դպրոցը, որը տեղավորվեց եռահարկ շենքում։

Իրանում սահմանադրական շարժման ժամանակաշրջանում, 1909 թ., Թավրիզում հիմնվեց ևս մեկ դպրոց՝ «Թեմական կենտրոնական միջնակարգ դպրոցը»[10]։

Թեհրանի հայկական դպրոցները ստեղծվեցին ավելի ուշ, քան Նոր Ջուղայի և Թավրիզի դպրոցները։ Սա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ Թեհրանի հայկական բնակչությունը փոքրաթիվ էր։ Հետագայում Թեհրանում նոր դպրոցների ստեղծումը կապված էր հայ բնակչության աճի և տեղաբաշխման հետ։

Թեհրանի առաջին հանրակրթական դպրոցը՝ «Հայկազյան դպրոցը» հիմնադրվեց Դարվազե Ղազվին թաղում, 1870 թ.։ Հայ կանանց միությունների փորձերը՝ բացել քաղաքում օրիորդաց դպրոց, առավել քան քսան տարի ապարդյուն էին անցնում։ Վերջապես, 1891—1892 թթ. Թեհրանում հիմնադրվեց առաջին հայկական օրիորդաց դպրոցը[11]։ 1891 թ. Դարվազե Ղազվին թաղում բացվեց Ազգային դպրոցը, իսկ 1903 թ.՝ դպրոց Դարվազե Դովլաթի թաղում։

---

6 «Վերածնունդ» թերթ, 1935, դեկտեմբերի 8, և «Այիք» թերթ, 1956, օգոստոսի 27։

7 «Ատրպատական», էջ 106—107։ Հայկ Աճեմյան, Պատմություն Արամյան ազգային դպրոցի, Թավրիզ, 1936, էջ 12—13 և 26—28։

8 «Ատրպատական», էջ 114։

9 «Այիք», 1956, մարտի 27, օգոստոսի 27, և 1958, փետրվարի 7։

10 «Այիք», 1956, օգոստոսի 27։

11 «Համառոտ պատմություն Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերության» (1907—1957), Թեհրան, 1957, էջ 4—6։

1910 թ. Հասանաբադ թաղում, ուր այդ ժամանակ բնակություն էր հաստատել թեհրանահայերի մեծամասնությունը, կառուցվեց նոր «Հայկազյան դպրոցը»։

Այս դպրոցի հետ են կապված իրանական հայտնի դիվանագետ և Շեքսպիրի հայերեն անզուգական թարգմանչի, Հովհաննես Մասեհյանի երիտասարդական տարիները։ Նա եղել է դպրոցի առաջին շրջանավարտներից (դրպրոցը նա ավարտել է 1878 թ. գերազանց ցուցանիշներով)։ Վերադառնալով Փարիզից, ուր ստացել էր բարձրագույն կրթությունը, Հովհաննես Մասեհյանը շահի պալատում լինելով թարգմանիչ, միաժամանակ, մի քանի տարի շարունակ վարել է դպրոցի տեսչի, ուսուցչի, ինչպես նաև հոգաբարձության նախագահի պաշտոնները։

Գավառներում, հայկական դպրոցների հիմնադրման սկիզբը համընկնում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հետ։ Անցյալ դարի 70-ական թվականներին հայկական դպրոցներ կային Սալմաստի մի շարք գյուղերում՝ Հավթվանում, Փայաջուկում, Ղալասարում, ավելի ուշ՝ Սարնայում, Ախտախանայում, Սավրայում և այլ վայրերում։ XX դարի սկզբներին դպրոցներ կային գավառի համարյա բոլոր հայկական գյուղերում։ 1903 թ. Փայաջուկ գյուղում, Բաֆֆու ծննդավայրում, կառուցվեց տեղական դպրոցի երկհարկանի շենքը։ 1904—1905 ուսումնական տարում Սալմաստի 11 դպրոցներում սովորում էին 800 աշակերտներ[12]։

1885 թ. հայկական դպրոց ստեղծվեց նաև Մարաղայի տեղական եկեղեցում։ 90-ական թվականներին այս դպրոցի համար կառուցվեց առանձին շենք։ 1898—1900 թթ. Թավրիզի հայ կանանց բարեգործական ընկերության ջանքերով դպրոցներ բացվեցին Ուրմիայի (Ռզաե), Մակուի, Ղարադաղի և Բարանդուզի մի շարք քաղաքներում և գյուղերում[13]։

Այս միությունը հատուկ տեղ է գրավում գաղութի դպրոցական կրթության պատմության մեջ։ Նրանց շնորհիվ հայոց լեզուն սերմանվել է հայերի մի ամբողջ սերնդի, որոնք մինչ այդ խոսում էին թուրքերեն և քրդերեն։ Միության նախագահ Սրբուհի Ամատունին իր լուսավորչական գործունեության համար տեղական բնակչության կողմից արժանացել էր «Մայրիկ» անվանը[14]։

1905 թ. նախօրեին և հատկապես նրանից հետո, ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ դպրոցական կրթությունը իրեն համար ճանապարհ է հարթում դեպի Իրանի հեռավոր շրջանները։ 1904 թ. հայկական դպրոց ստեղծվեց Համադանում, 1905—1909 թթ.՝ Ղազվինում, ինչպես նաև Մեշհեդում, Սուլթանաբադում (Արաք), Ռեշտում, Էնզելիում (Փեհլեվի)։

Այդ նույն ժամանակ Չհարմահալ գավառի 8 գյուղերից չորսում՝ Լիվասիայում, Վերին Քոնարքում, Մամուքայում և Սիրաքում գոյություն ունեին հայկական դպրոցներ[15]։ Փերիա գավառում հայկական դպրոցները համեմատաբար քիչ էին՝ 27 գյուղերից միայն 10-ում[16], իսկ Բուրվարի, Գյափլա, Քամարա և Քաղագ գավառներում, որոնք գտնվում են Արաքի շրջակայքում, հայկական դպրոցները հատ ու կենտ էին։

---

12 «Ատրպատական», էջ 120—122։

13 «Ալիք», 1956, օգոստոսի 30, սեպտեմբերի 11, 1957, ապրիլի 4։

14 «Վերածնունդ», 1951, մայիսի 5։

15 Ա. Էդդարյան, Իրանի Չհարմահալ գավառ, Թեհրան, 1965, էջ 66—72։

16 «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 21։

Իրանի հայկական դպրոցների վրա, մինչև XX դարի 20-ական թվականները հատկապես ուժեղ էր Կովկասի հայկական մշակութային կենտրոնների ազդեցությունը։ Այստեղից, գլխավորապես Թիֆլիսից Իրան էին գալիս ուսուցիչներ, ուղարկվում էր ուսումնա-մեթոդական գրականություն. ուսուցման հիմքում դրված էր Կովկասի հայկական դպրոցների ծրագիրը։

* * *

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Իրանի հայկական գաղութի դպրոցական կրթությունը իր վրա կրեց այն ժամանակվա գահակալ Ռզա շահի կողմից իրագործվող ռեֆորմների ազդեցությունը։ Այս ռեֆորմները, որոնք օժանդակեցին երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, արմատական փոփոխություններ մտցրին դպրոցական կրթության սիստեմում։ 1927 թ. մեջլիսի կողմից ընդունված օրենքով և 1932—1933 թթ. որոշումներով երկրում մտցվեց պարտադիր տարրական ուսուցում (վեցամյա)։ Միաժամանակ վերանայվեցին դպրոցական ծրագրերը, որոնք լրացվեցին բնական առարկաներին հատկացվող ուսումնական ժամերով[17]։

20-ական թվականներին Իրանի հայկական դպրոցներում գերիշխում էին հումանիտար առարկաները և չնայած որ այդ դպրոցների շրջանավարտներին բնորոշ էր բարձր կրթական մակարդակը, այնուամենայնիվ նրանց չէր հաջողվում գործունեության ասպարեզ գտնել տեխնիկական կրթությամբ կադրերի բարձր պահանջարկի պայմաններում։ Այսպիսով, գաղութի դպրոցական կրթության ասպարեզում ծառացան երկու հրամայական պրոբլեմներ դպրոցական ցանցի լայնացում և դպրոցական ծրագրերի մոդեռնացում։

Պատերազմը մեծ վնաս հասցրեց երկրի հյուսիսային շրջաններում գտնվող հայկական դպրոցներին, որտեղ ինչպես վերը նշված էր, հիմք էր դրվել գաղութի լուսավորության օջախներից առաջիններից մեկը։ Սալմաստում երբեմնի գոյություն ունեցող 11 դպրոցներից մնացել էին 3-ը՝ Հավթվանում, Փայաջուկում և Մահլամում։ Ղարադաղի 21 հայկական գյուղերից միայն 10-ում կային դպրոցներ, իսկ Ուրմիայի 33 գյուղերից և ոչ մեկում չէր գործում հայկական դպրոց[18]։

20—30-ական թվականներին դպրոցական կրթությունը առավել լայն թափ ստացավ երկրի հարավային և կենտրոնական շրջանների հայաբնակ վայրերում։ 1920—1921 թթ. դպրոցներ հիմնվեցին Ահվազում, Սուլթանաբադում և Աբագանում։ 1922—1927 թթ. դպրոցներ կային արդեն Չհարմհալի բոլոր գյուղերում[19], Փերիայում նրանց թիվը հասավ 17-ի, Բուրվարիում՝ 6-ի[20]։

Ազգային դպրոցներից բացի, հայ երեխաները այն ժամանակ սովորում էին նաև ամերիկյան, անգլիական և ֆրանսիական միսիոներական դպրոցներում[21]։ Ստեղծված լինելով «դավանանքի ազատության» դրոշի ներքո,

---

17 Е. А. Дорошенко, Система просвещения в Иране, Москва, 1959, стр. 22—23.

18 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 52—53։

19 «Իրանի Չհարմհալ գավառը», էջ 66—72։

20 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 63։

21 Elgin Groseclose, „Introduction t'Iran", New York, Oxford University Press, 1947, p. 113.

նրանք հանդիսանում էին ոչ այլ ինչ, քան Արևմուտքի ազդեցության կրողները երկրում։ Օգտվելով այն հանգամանքից, որ ազգային դպրոցները չէին բավարարում գաղութի պահանջները, նրանք կարողացան իրենց դպրոցներում ներդրավել հայ երիտասարդության մի զգալի մասը։

Այս տեսակետից հատկանշական է ազգային և միսիոներական դպրոցներում սովորող հայ երեխաների թվային տվյալները։ 1926 թ. Թեհրանի «Հայկազյան դպրոցում» սովորում էին 226, իսկ դպրոցին կից մանկապարտեզում 64 երեխա։ Նույն թվին տեղական ամերիկյան դպրոց հաճախում էին 350, իսկ ֆրանսիական դպրոցները («Սան Լուի»—տղաների համար, «Ժաննա դ'Արկ» և «Սան Ժոզեֆ»—աղջիկների)—155 երեխա[22]։ Ամերիկյան միսիոներական դրպրոցներում սովորում էր Քերմանշահ քաղաքի և Ուրմիա գավառի հայ երեխաների մեծամասնությունը։ Նոր Ջուղայի հայ երեխաների զգալի մասը սովորում էր տեղական անգլիական միսիոներական դպրոցներում։ Համադանի ամերիկյան երկու դպրոցներում (տղաների և աղջիկների) 1925—1926 ուսումնական տարում սովորում էին տեղական հայերի ավելի քան 100 երեխա։

Արևմտյան միսիոներների դպրոցներում հայոց լեզվի, գրականության և պատմության դասավանդման ժամերը խիստ սահմանափակ էին, իսկ մի շարք դեպքերում բացահայտ կերպով տարվում էր հայ երիտասարդության ուծացման (ասիմիլյացիա) գիծ։ Այսպես, Համադանի ամերիկյան դպրոցների ուսումնական ծրագրերից հանված էր հայոց լեզուն։ Հատկանշական է, որ չնայած տեղական հայկական բողոքական համայնքի ամբաստանությանը, այս դպրոցները շարունակում էին իրենց գիծը[23]։

Ժողովրդական կրթության ռեֆորմը և մասնավորապես դպրոցների առանձնացումը եկեղեցուց, թուլացրեց արևմտյան միսիոներների ազդեցությունը Իրանում։ 30-ական թվականների սկզբում գրեթե բոլոր արտասահմանյան միսիոներական դպրոցները փակվեցին։

Այս հանգամանքը ևս մի խթան հանդիսացավ գաղութի դպրոցական շինարարության գործում։ 1932—1933 թթ. հնդկաստանցի բարեգործ Դավիթ Դավթյանի միջոցներով Թեհրանում հիմնադրվեց «Քուշեշ-Դավթյան» դպրոցը։ Այդ նույն ժամանակ հիմնադրվեց նաև դպրոց Մեջիդե-Սուլեյմանում, երկրի հարավում գտնվող հայաբնակ նորաստեղծ օջախներից մեկում[24]։

30-ական թվականների սկզբում Թեհրանի, ինչպես նաև Թավրիզի, Նոր Ջուղայի և այլ քաղաքների հայկական դպրոցներում ներդրվեց նոր ուսումնական ծրագիր։ Այս ծրագրերի համար հատկանշական էր այն, որ նրանցում ավելացված էր պարսկերեն լեզվի դասավանդման ժամերը, հատուկ ուշադրություն էր դարձվում բնական առարկաների ուսուցմանը, ինչպես նաև ավելացվում էր ժամեր անգլերեն լեզվի համար[25]։ Նոր ծրագրի համաձայն, հայկական դպրոցները մնալով հիմնականում ազգային, ստացան որոշ պարսկական թեքում։

Այսպիսով, 1936 թ. նախօրյակին Իրանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում գոյություն ունեին ազգային դպրոցներ։ Սկսած XIX դարի 30-ական թվա-

22 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 114—116։
23 Նույն տեղում, էջ 81—82։
24 «Այիբ», 1955, հունվարի 31։
25 «Վերածնունդ», 1930, նոյեմբերի 28։

կաններից, մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում այս դպրոցները օգտվում էին ներքին ինքնավարության իրավունքից։ Դա իր արտացոլումն էր գտնում նրանում, որ հայկական դպրոցները ղեկավարվում էին իրենց սեփական ուսումնական ծրագրերով, իսկ ուսուցման հիմքում դրված էր հայոց լեզուն։ Դպրոցները կառուցվում և պահվում էին ծխական համայնքի միջոցների հաշվին և պատկանում էին գաղութին ի դեմս տեղի թեմական մարմինների։

Պետք է նշել, որ երկրում հայկական ազգային դպրոցների գոյության իրավական երաշխիքները արտացոլված էին իրանական շահերի մի շարք հրովարտակներում և այլ փաստաթղթերում[26]։

* *
*

Իրանահայերի դպրոցական կրթության պատմության մեջ 1936 թ. հանդիսացավ շրջադարձային կետ։ Պետական իշխանության կենտրոնացման Ռզա շահի քաղաքականությունը, որը նա սկսել էր 20-ական թվականներին, շուտով շոշափեց նաև տեղական հայ բնակչության շահերը։ Այս քաղաքականությունը չնայած ուներ օբյեկտիվորեն առաջադիմական նշանակություն Իրանում կապիտալիզմի զարգացման պայմաններում, սակայն հիմնված լինելով իրագործման կոպիտ մեթոդների վրա, հետագայում վերածվեց ազգերի «իրանացման» շովինիստական, հետադիմական քաղաքականության։ Հիմք չունենալով հայերին «իրանացնելու» կրոնական սկզբունքով, ինչպես դա կատարվում էր տեղի ադրբեջանցիների, քրդերի, արաբների և այլ ազգերի նկատմամբ, իրանական իշխանությունները ձեռնարկեցին հայ ազգային դպրոցների փակումը։

Պետք է նշել, որ հայկական դպրոցների փակման փորձը ձեռնարկվել էր դեռ 1927 թ.։ Սակայն իրանական իշխանությունները այն ժամանակ չիրագործեցին այդ նպատակը, քանի որ, ինչպես վերը նշվեց, հայկական դպրոցները իրենց ստեղծված օրից հանդիսացել են իրանահայ գաղութի սեփականությունը։

Արգելք հայկական դպրոցների վրա դրվեց այն ժամանակաշրջանում, երբ Ռզա շահը սկսեց իրագործել երկրի նացիստական տարրերի հետ մտերմանալու քաղաքականությունը։ Միաժամանակ նա ձգտում էր ընդօրինակել «համասեռ» պետության ստեղծման Թուրքիայի «օրինակը»։ Պատահական չէր, որ հայկական, ինչպես նաև մյուս ազգային փոքրամասնությունների դպրոցների

26 Մեր տրամադրության տակ չկա Իրանի շահերի բոլոր հրովարտակների և փաստաթղթերի ցուցակը այն պարզ պատճառով, որ նրանցից շատերը, անկասկած, լինելով երկրի (Իրանի) արխիվներում, անմատչելի են մեզ համար։ Սակայն, մեր կարծիքով, ձեռքի տակ գտնվող փաստաթղթերը բավարար չափով կարող են հիմնավորել հայկական դպրոցների իրավական դրությունը Իրանում։ Բերենք այս տիպի պատմական փաստաթղթերից մի քանիսը։

1. Պատմական գրություն Թավրիզի Արամյան դպրոցի ստեղծման վերաբերյալ (տե՛ս Հայկ Հաճեմյան, Պատմություն Արամյան ազգային դպրոցի, էջ 26—27)։

2. Իրանա-հնդկական թեմի առաջնորդի դիմումը նասրեդին շահին (տե՛ս Հարություն Տեր-Հովհանյանց, Պատմություն Նոր Ջուղայի, հ. 2-րդ, էջ 83—85)։

3. Թավրիզի թեմի առաջնորդի դիմումը նասրեդին շահին (տե՛ս ՀԿՊՊ արխիվ, ֆ. 57, ց. 1, գ. 224, թ. 13—18)։

4. Մուղաֆերեդին շահի հրովարտակը (տե՛ս Ե. Ֆրանգյան, Ատրպատական, էջ 108—109)։

փակումը իրագործվեց Ռզա շահի Թուրքիա կատարած ուղևորությունից վերադառնալուց հետո։

Այսպիսով, 1936 թ. իրանական կառավարության հրամանով հայկական դպրոցները փակվեցին, իսկ նրանց շենքերը և գույքը բռնագրավվեց տեղական իշխանությունների կողմից։ Սակայն գաղութը չհաշտվեց սրա հետ։ Իրանի հայաբնակ վայրերում մեկը մյուսի հետևից սկսեցին առաջանալ հայոց լեզվի դասընթացներ, գրադարաններ, հայոց պատմությունը և գրականությունը ուսումնասիրող խմբակներ և այն ամենը, ինչը կարող էր փոխարինել հայկական դպրոցին։

Այս գործում հատուկ դեր խաղացին կանանց միությունները։ Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերությունը հավաքելով հայ դպրոցների գրադարանային ֆոնդից մի քանի հազար գիրք, ստեղծեց խոշոր գրադարան[27]։ Հայկական դպրոցների շրջանավարտ օրիորդների խումբը, որն ստեղծվեց 1939 թ., իր շուրջը հավաքեց մոտ 150 դպրոցական հասակի երեխա։ Այս խմբի անդամները, որը շուտով դարձավ մինչև այժմ գոյություն ունեցող «Հայ կին» միությունը, դասավանդում էին հայոց լեզու, պատմություն, գրականություն, կազմում էին դասագրքեր և ձեռնարկներ, պատրաստում էին գրենական պիտույքներ, որոնք ձրի բաժանվում էին սովորողներին[28]։

Թավրիզի կանանց կազմակերպությունները բացեցին հայոց լեզվի խմբակներ, որոնք գոյություն ունեցան մի ամբողջ տասնամյակ։ Խմբակներ էին բացված նաև Նոր Ջուղայում և երկրի մի շարք այլ քաղաքներում։

Գաղութը առանց դպրոցների գոյություն ունեցավ մինչև 1941 թ.։ Ռզա շահի քաղաքականության ձախողումը և նրա հրաժարվելը գահից, կտրականապես փոխեց Իրանում գոյություն ունեցող դրությունը։ Ստեղծվեց ազգային դպրոցների վերաբացման հնարավորություն։ 1941 թ. սկսվում է գաղութի դպրոցական կրթության պատմության նոր ժամանակաշրջանը։

* *
*

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Մերձավոր և Միջին արևելքում ազգային-ազատագրական շարժման ազդեցության տակ Իրանի կառավարող շրջանները ստիպված էին հանել ազգային դպրոցների արգելքը։ Սակայն վերականգնելով դպրոցները, իրանական կառավարությունը մտցրեց նոր կանոնադրություն, որի հիման վրա ուսուցման պրոցեսի հիմքում դրվում էր պետական, այսինքն՝ պարսկերեն լեզուն։ Հայկական դպրոցներում որպես պարտադիր ծրագիր մտցվեց լուսավորության մինիստրության ծրագիրը, որը նախատեսված էր տարրական դպրոցների համար[29]։ Թույլատրվում էր դասավանդել միայն հայոց լեզու և կրոն, որոնք չէին մտնում պարտադիր առարկաների շարքը։ 1946 թ. Թեհրանի թեմական խորհրդի խնդրանքով, կրոնը դասվեց պարտադիր առարկաների շարքում[30]։ Հայոց լեզուն մինչև օրս էլ այդ-

27 «Համառոտ պատմություն Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերության», էջ 32։

28 «Ակիր», 1955, փետրվարի 1 և 1959, նոյեմբերի 10։

29 ՀԿՊՊ արխիվ, ֆ. 57, «Համառոտ տեղեկագիր Թեհրանի հայոց «Քուշեշ» (Դավթյան) Ֆրկսեռ դպրոցի ուսումնական մասի 1943—1944 տարիների»։

30 Նույն տեղում։

պիսի ճանաչում չի ստացել, չնայած իրանական իշխանություններից այդ իրավունքը ստանալու ուղղությամբ թեմական մարմինների գործադրվող ջանքերին[31]։

Արգելքը հանելուց հետո ոչ բոլոր հայկական դպրոցները կարողացան անմիջապես մտնել նորմալ հունի մեջ։ Թեհրանի դպրոցներին այդ հաջողվեց 1941—1944 թթ., Աբագանի «Ադաբ» դպրոցը իր գործունեությունը վերսկսեց 1943 թ., իսկ Թավրիզի «Արամյան» դպրոցը՝ 1944 թ.։ Սակայն դաղութի դրպրոցների մեծամասնությունը կյանքի կոչվեց միայն 50-ական թվականների կեսին։ Այս բոլորի պատճառը դժվար չէ հասկանալ, եթե վերհիշենք այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան երկրում եռապատերազմյան տարիներին։ Այդ ժամանակ դպրոցական կյանքը վերականգնվել էր ոչ միայն քաղաքներում, այլև գավառներում՝ Փերիա, Զհարմհալ, Իզաե, ինչպես նաև Ղարաղանի շրջանում։ Բացառություն էին կազմում միայն Ղարադաղի դպրոցները, որոնք չկարողացան վերականգնվել գյուղերի աղետային դրության պատճառով։

1953 թ. մի թեհրանաբնակ ճարտարապետ, որը ծագումով ղարադաղցի էր, տեսնելով այս բոլորը, իր միջոցներով Ղարագլուխ գյուղում կառուցում է դպրոցի շենք։ Նրա օրինակին են հետևում Թեհրանում, Թավրիզում և ուրիշ քաղաքներում բնակվող ղարադաղցիները, որոնք ստեղծում են «Ղարադաղի հայրենասիրաց միությունը»։ Այս միության ջանքերով 1954—1955 թ. գավառի Սրդն, Վինա, Ողան և Ուրգության գյուղերում կառուցվեցին ևս չորս դպրոցներ։ Սրանք կառուցված էին այն հաշվով, որպեսզի նրանցում կարողանային սովորել և հարևան գյուղերի երեխաները։ Գավառի 5 դպրոցներում 1955 թ. սովորում էին 240 երեխաներ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո, դպրոցական շինարարությունը հատկապես լայն թափ է ստանում Թեհրանում, որտեղ արագ տեմպերով աճում էր հայ բնակչությունը։

1941 թ. տնտեսական դժվար պայմանների հետևանքով մի քանի հազար հայ գյուղացիներ տեղափոխվեցին Թեհրան և բնակություն հաստատեցին նրա հյուսիսային ծայրամասերում՝ Բեհջաթաբադում, Ֆիշերաբադում և Ամջադիեում։ Օգնության կարգով թեհրանաբնակ հայերի մի խումբ 1942 թ. Բեհջաթաբադում կառուցում է «Դանահի» դպրոցը։

1947 թ. դեպի Հայկական ՍՍՀ հայրենադարձության կասեցման պատճառով Փերիայի, Բուրվարի, Զհարմհալի, Գափլայի և այլ շրջանների հազարավոր գյուղացիներ մնացին Թեհրանում և բնակություն հաստատեցին նրա հյուսիսային շրջակայքում։ Այնտեղ իրար հետևից ստեղծվեցին «Արամ» («Աբովյան») և «Շահ Ազիզ» դպրոցները Հեշմաթիե թաղում, ինչպես նաև «Հախնազարյան» դպրոցը Յուսուֆաբադ թաղում։

Թե ինչպես էին ստեղծվում այս դպրոցները, այդ մասին է ասում «Հախնազարյան» դպրոցի պատմությունը։ Մի անգամ երեկոյան, թաղի հայ բնակիչները իրենց ժամանակավոր տնակների վրա աշխատելուց հետո հավաքվեցին մի հարևանի մոտ և սկսեցին խորհրդակցել, թե ինչպես անցկացնեն էլեկտրականություն։ Շուտով զրույցը ֆիզիկական լույսից ինքնըստինքյան վերածվեց հոգեկան լույսին։ «Լավ է կույր աչք, քան կույր մտք»—որոշում է

31 «Վերածնունդ», 1947, նոյեմբերի 12—13։

ժողովը և հայտարարում է իրեն ապագա դպրոցի ժամանակավոր հոգաբարձություն։ Ամեն մի ընտանիքից հավաքվեց 3-ական թուման իբրև ազգային հարկ աշակերտական սեղանների և նստարանների ձեռք բերման համար։ Մի առանձնացված հողամասում, սեփական ուժերով նրանք կառուցում են դպրոցի շենքը։ «Քուշեշ-Դավթյան» դպրոցի հոգաբարձությունը օգնում է նրանց ստանալու դպրոց բանալու իրավունքը։ Դպրոցը կյանք է մտնում 1952 թ.[32]։

Հետագա տարիներին ստեղծվում են «Արաքս» դպրոցը նույն Յուսուֆաբադ թաղում, «Անի» («Ռոստոմ») դպրոցը Բահար և «Շահ Աբբասը» Սեյեդ թաղերում։

Հայ ընտանիքների հոսքը Թեհրան երկրի այլ քաղաքներից դպրոցական շինարարության անհրաժեշտություն է ստեղծում քաղաքի կենտրոնական մասում։ 1954 թ. Թեհրանաբնակ Մ. Սարգսյանի միջոցներով կառուցվում է «Մարիամյան» դպրոցը։ Այս դպրոցի եռահարկ շենքում տեղավորվում են «Քուշեշ-Դավթյան» դպրոցի օրիորդաց դասարանները։ 1957—1958 թթ. դպրոցական նոր շենք է տեղավորվում և ինքը՝ «Քուշեշ-Դավթյան» դպրոցը։ Այս դպրոցի քառահարկ շենքի շինարարության համար միջոցները հավաքվել էին Թեհրանահայ բնակչության նվիրատվություններից։ Շենքի կառուցումը իրագործել է այս նպատակի համար հատուկ ստեղծված «Դպրոցաշեն հանձնաժողովը»։

1958 թ. մի այլ Թեհրանաբնակ՝ Մ. Սահակյանը, միջոցներ է տրամադրում Հեշմաթիե թաղում ևս մեկ դպրոցի եռահարկ շենք կառուցելու համար։ Նույն ժամանակ Մաջիդիե թաղում բացվում է «Արարատ» դպրոցը։

50—60-ական թվականներին Թեհրանում, ուր այն ժամանակ կենտրոնացվել էր իրանահայ բնակչության հիմնական մասը (135 հազար հայ բնակչությունից 80 հազարը) ստեղծվեցին «Հուր», «Նաիրի» և «Թունյան» դպրոցները։ 1960 թ. տեղի է ունենում «Արաքս» դպրոցի նոր շենքի հիմնադրումը, որի համար հողամաս էր նվիրել Թեհրանում բնակվող Այդինյանը։

Հետպատերազմյան տարիներին, գաղութի մշակութային կենտրոններից մեկն է դառնում Աբադանը։ 1949 թ. այնտեղ կառուցվում է «Ադաբ» դպրոցի եռահարկ նոր շենքը։

Այդ տարիներին դպրոցական նոր շենքեր են կառուցվում նաև Մեշհեդում, Ռեշտում և այլ քաղաքներում։

Աշակերտների կողմից մայրենի լեզվի, պատմության և գրականության նյութերը լիարժեք յմբռնելու պրոբլեմները հանգեցնում են այն բանին, որ 40—50-ական թվականներին տարրական դպրոցների մի մասը վերածվում է միջնակարգի։ Ուսուցման ժամկետի երկարացման հաշվին հնարավոր է դառնում ավելի շատ ժամեր տրամադրել հայերեն լեզվով դասավանդվող առարկաներին։ Այդ ժամանակ միջնակարգ են դառնում «Քուշեշ-Դավթյան», «Մարիամյան» և «Սահակյան» դպրոցները Թեհրանում, «Ադաբ» դպրոցը Աբադանում, «Թամարյան-Հայկազյան» դպրոցը Թավրիզում, «Կատարինյան» և «Քանանյան» դպրոցները Նոր Ջուղայում։

Բացի ազգային դպրոցներից, Թեհրանում կան նաև մասնավոր դպրոցներ։ Մասնավոր դպրոցների երևան գալը բխում էր հայ ընտանիքների, գլխավորապես մտավորականության, իրենց երեխաներին հայկական կրթություն տալու ձգտումից։ Այս դպրոցները պետական ծրագրի շրջանակներում սովո-

32 «Ալիք», 1954, փետրվարի 11։

րեցնում են աշակերտությանը, առարկաները դասավանդելով հայերեն լեզվով։ Այս դպրոցներից շատերում գոյություն ունեն անգլերեն կամ ֆրանսերեն լեզվի խմբակներ։ Այսպիսով, այդ դպրոցների շրջանավարտները հանրակրթական առարկաների հետ միասին հնարավորություն ունեն տիրապետելու երեք լեզուների՝ հայերենի, պարսկերենի և որևէ օտար լեզվի։

Այս տիպի դպրոցներից ամենահինը «Բուստան» դպրոցն է։ Ներկայումս այստեղ գործում են արական և իգական նախակրթարաններ և վեցամյակներ, ինչպես նաև օրիորդաց միջնակարգ դպրոցը։ 1946—1947 թթ. ստեղծվել է «Սանդուխտ» դպրոցը, իսկ 1955 թ. «Թեհրանի կանանց բարեգործական միության» կողմից հիմնադրվեց «Նուբար» դպրոցը։

Վերջին տասնամյակում Թեհրանում բացվել են ևս վեց մասնավոր դրպրոցներ՝ «Բերսաբե», «Թաբան», «Ռաֆֆի», «Սթայեշ», «Փարթովի», ինչպես նաև «Ալիշան» դպրոցը Թեհրանի արվարձան Վանագ գյուղում։ Բացառությամբ «Փարթովի» դպրոցի, որը լրիվ միջնակարգ է, մյուս դպրոցներն ունեն վեցամյա ուսուցում։ Թվարկված դպրոցներից միայն «Բերսաբե»-ն է օրիորդաց։

Թեհրանի մասնավոր դպրոցները ճանաչված են համապատասխան պետական մարմինների կողմից։

Թեհրանի 14 ազգային դպրոցներից գաղութի սեփականությունն են հանդիսանում «Քուշեշ-Դավթյան», «Մարիամյան», «Սահակյան» և «Արաքս-Այդինյան» դպրոցների շենքերը։ Մյուս դպրոցների շենքերը վարձակալվում են։ Ազգային դպրոցների շենքերը գավառական քաղաքներում, այդ թվում նաև Նոր Ջուղայում, Թավրիզում և Արագանում, պատկանում են թեմական տեղական մարմիններին։

Մասնավոր դպրոցների հետ միասին հայկական դպրոցների թիվը Թեհրանում հասնում է 22-ի։ Սրանցից 5-ը միջնակարգ են, իսկ 17-ը՝ տարրական։ Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մի շարք դպրոցներ փաստորեն ունեն երկու տարրական դպրոց՝ արական և իգական, ապա տարրական դպրոցների թիվը քաղաքում կանցնի 20-ից։

Գաղութում մոտավորապես 40 քաղաքային և տասնյակ գյուղական դրպրոցներ կան։

Գաղութի դպրոցական կրթության հետ սերտորեն շաղկապված են նաև մանկապարտեզները, որոնք որպես կանոն ունեն դպրոցական նախապատրաստական բաժանմունքներ։ Գաղութի առաջին մանկապարտեզը ստեղծվել է 1899 թ. Թավրիզի Լիլակա թաղում «Հայ կանանց բարեգործական միության» կողմից։ Դա առաջին մանկապարտեզն էր նաև ամբողջ Իրանում։ 1907 թ. նման մանկապարտեզ բացվեց և Ղալա թաղում[33], Ինչպես արդեն նշվել է, Նոր Ջուղայում «Գևորգ Քանանյան» մանկապարտեզը հիմնադրվել էր 1901—1905 թթ.։ Մոտավորապես նույն թվերին Թեհրանում ստեղծվեց «Մանկական պալատ» անունը կրող մանկապարտեզը[34]։

Առավել ժամանակակից «Բերսաբե» մանկապարտեզը Թեհրանում հիմնադրվեց 1931 թ.[35], իսկ «Թումանյան»-ը՝ 1944 թ.։ 1963 թ. վերը հիշատակված Այդինյանի կողմից հատկացված հողամասի վրա կառուցվեց «Քուշեշ» մանկապարտեզի շենքը, որը հանդիսանում է գաղութի սեփականությունը։

33 «Վերածնունդ», 1951, հունիսի 5։
34 Նույն տեղում։
35 Նույն տեղում, 1931, հոկտեմբերի 22։

«Քուշեշ» մանկապարտեզը, որի վարժուհին է էլբիս Ֆերահյանը, ամբողջ Իրանի այդ տիպի մանկական հիմնարկների մեջ լավագույնն է հանդիսանում։ Հազվադեպ չէ, որ այստեղ հյուր են լինում երկիր ժամանած օտարերկրյա պատվիրակությունները։

1944 թ. ժամանակակից մանկապարտեզ հիմնադրվեց նաև Աբադանում[36]։

Ինչպես տեսանք, գաղութի դպրոցական կրթության սիստեմում ուսուցման պրոցեսն ունի երեք աստիճան. մեկ տարվա նախապատրաստական բաժանմունք, վեցամյա ուսուցմամբ տարրական դպրոց և միջնակարգ դպրոց 12 տարվա ուսուցմամբ (Աբադանում՝ 11 տարի)։

Իրանի հայկական դպրոցներում ուսուցումը տարվում է արևելահայերենով։ 30-ական թվականներին, Թեհրանի դպրոցների վերջին երկու դասարանում դասավանդվում էր արևմտահայերեն, իսկ Նոր Ջուղայի դպրոցներում՝ գրաբար։ Ներկայումս գրաբարը ուսումնասիրվում է Սպահանի համալսարանի գրականության ֆակուլտետի հայագիտության բաժանմունքում, որը բացվել է 1961 թ.[37]։ Նման բաժանմունք 1964 թ. ստեղծվեց նաև Թեհրանի համալսարանի գրականության ֆակուլտետին կից[38]։

Հայկական դպրոցների համար դասագրքեր և ուսումնական այլ ձեռնարկներ ստեղծվում են տեղում։ Սրանց կազմման ժամանակ օգտագործվում են այլ գաղութներում, ինչպես նաև Հայկական ՍՍՀ-ում հրատարակվող դասագրքերը և ձեռնարկները։

Իրանի հայկական դպրոցների նյութական դրությունը ծանր է։ Ինչպես տեսանք, դրանք գոյանում են բացառապես տեղի հայ բնակիչների միջոցներով։ Համեմատաբար լավ վիճակում են քաղաքային դպրոցների շենքերը։ Գյուղական դպրոցները չեն համապատասխանում գյուղական դպրոցի մեր ըմբռնմանը։ Որպես կանոն, սրանք տեղավորված են մի քանի սենյակներով փոքրիկ տնակներում, շատ հաճախ կիսամութ, կիսաքանդ, ուր ձմեռը խոնավ է, իսկ ամռանը փոշոտ։ Ուսման տևողությունը դրանցից շատերում 2—4 տարի է։

Դպրոցների նյութական ապահովվածության հարցը գաղութում կրում է խրոնիկական բնույթ։ Դպրոցների բյուջեները կազմվում են հանգանակություններից, ունևոր մարդկանց նվիրատվություններից ու կտակներից, եկեղեցու և բարեգործական ընկերությունների վճարումներից։ Բյուջեի մի զգալի մասը կազմվում է ուսման վարձից։

Իրանական իշխանությունները դպրոցներին անհրաժեշտ ֆինանսական օգնություն ցույց չեն տալիս։ Պետական օգնություն տրվում է միայն դպրոցներից մի քանիսին։ Իրանի լուսավորության մինիստրությունը վճարում է միայն այն ուսուցիչներին, որոնց իրենք են ուղարկում հայկական դպրոցները, պետական ծրագրով պարսկերեն լեզու և այլ առարկաներ դասավանդելու համար։

Վճարովի ուսուցման սիստեմը ծանր լծի պես նստած է հայ աշխատավոր մասսաների ուսերին։ Չնայած բարեգործական ընկերությունների և առաջին հերթին կանանց կազմակերպությունների ջանքերին ապահովելու չունևոր ընտանիքների երեխաներին, ունևոր խնամակալներով և այլ միջոցներով, նրան-

36 «Վերածնունդ», 1944, ապրիլի 13։

37 «Ալիք», 1961, փետրվարի 7 և «Народы Азии и Африки», 1965, № 5, стр. 240.

38 «کیهان» 1964 թ., հուլիսի 17։

ցից շատերը, ստիպված են լինում գնալ պետական դպրոցները, որտեղ ուսման վարձը համեմատաբար ցածր է։

Իրանի հայկական դպրոցներում սովորողների քանակի մասին մենք պաշտոնական տվյալներ չունենք։ Մոտավոր հաշվումներով, այդ թիվը հասնում է 15 հազարի։ Սովորողների ճնշող մեծամասնությունը ընկնում է քաղաքային բնակչությանը։ Գյուղական վայրերում սովորող երիտասարդության տոկոսը շատ ցածր է։

Հայ սովորող երիտասարդության 95 տոկոսը հաճախում է ազգային դպրոցները։ Իրենց սոցիալական կազմով դրանք ունևոր խավի, մտավորականության, արհեստավորների և բանվորների երեխաներ են։

Այն երեխաների համար, որոնք հաճախում են իրանական պետական դրպրոցներ, հայ կանանց միությունները Թեհրանում, Թավրիզում և այլ քաղաքներում կազմակերպել են հայոց լեզու, պատմություն և գրականություն ուսումնասիրող դասընթացներ։ Այն քաղաքներում, օրինակ Շիրազում, որտեղ հայ բնակչության սակավաթվության պատճառով չկան հայկական դպրոցներ, հայերի երեխաները սովորում են տներում կամ մասնավոր դասընթացներում։

Հայկական դպրոցները Իրանում, ինչպես նաև արտասահմանյան այլ գաղութներում, շատ հեռու են «Լուսավորության օջախներ» հասկացության շրջանակներից։ Օտարության պայմաններում նրանք միաժամանակ ծառայում են նաև որպես հայապահպան կենտրոններից մեկը, որի շուրջն է համախմբվում հասարակական և մշակութային կյանքը։

Իրանի հայկական դպրոցների պատմությունը, ազգային առանձնահատկությունների և ինքնատիպ մշակույթի համար տեղական հայ բնակչության մղած համառ պայքարի մի օրինակ է, որը գալիս է լրացնելու հայ ժողովրդի դարավոր մշակույթի պատմությունը։